ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-օգոստոս)













Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2019թ. հունվար-օգոստոսին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է ` 107.0%, 2018թ. հունվար-օգոստոսին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 107.6%, իսկ 2017թ. հունվար-օգոստոսին 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.3%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-օգոստոսին կազմել է 1,260,136.0 մլն.դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 161,236.7 և 221,398.4 մլն. դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-օգոստոսին կազմել է 208,242.2 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 4,704.6 և 28,315.2 մլն. դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2019 թ. հունվար-օգոստոսին կազմել է 1,986,228.6 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 216,662.4 և 421,215.9 մլն. դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-օգոստոսին կազմել է 1,284,372.1 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 191,910.5 և 380,228.8 մլն. դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-օգոստոսին 2018թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 109.5%, 2018 և 2017թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.4%-ի և 112.4%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2019թ. հունվար-օգոստոսին 2018թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 104.4%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.5%-ի և 92.0%-ի պարագայում:

* Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ցուցանիշը բացակայում է, քանի որ 2019թ. դրա ամփոփումը կատարվելու է եռամսյակային կտրվածքով

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-օգոստոս)

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Առևտրի շրջանառության իրական աճը 2019թ. հունվար-օգոստոսին 2018թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 109.0%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109.7%-ի և 112.3%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-օգոստոսին 2018թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 115.5%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 118.9%-ի և 112.4%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-օգոստոսին կազմել է 225,810.5 մլն.դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 19,391.8 և 13,552.3 մլն. դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-օգոստոսին կազմել է 850,175.7 մլն. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 145,680.7 և 211,742.1 մլն. դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-օգոստոսին կազմել է 167,022.6 մլն. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 3,815.7 և 4,463.8 մլն. դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-օգոստոսին կազմել է 17,127.2 մլն.դրամ, ինչը 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 20.1 մլն դրամով, իսկ 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է 567.8 մլն. դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-օգոստոսին 2018թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 114.8%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև  2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 89.6%-ի և 110.6%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար- օգոստոսին 2018թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 110.4%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109.3%-ի և 116.4%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-օգոստոսին 2018թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 99.4%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև  2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.2%-ի և 101.9%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-օգոստոսին 2018թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 99.5%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև  2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.3%-ի և 109.0%-ի պարագայում:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-օգոստոսին կազմել է 300,612.9 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 66,203.7 և 126,715.7 մլն. դրամով:

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-օգոստոս)

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ







Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-օգոստոսին կազմել է 172,807.1 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 13,650.3 և 24,912.9 մլն. դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-օգոստոսին 2018թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 125.4%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 134.5%-ի և 115.2%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-օգոստոսին կազմել է 283,452.4 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 48,942.1 և 87,055.4 մլն. դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-օգոստոսին 2018թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 107.7%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.0% և 103.4%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-օգոստոսին 2018թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 117.2%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 117.7%-ի և 120.4%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2019թ. հունվար-օգոստոսին 2018թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 101.8%, 2018թ. հունվար-օգոստոսին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 102.5%, 2017թ. հունվար-օգոստոսին 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 100.6%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2019թ. օգոստոսի վերջի դրությամբ կազմել են 790,375.0 մլն դրամ, ինչը 213,780.0 մլն. դրամով կամ 37.1%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 174,108.0 մլն. դրամով կամ 28.3%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2019թ. օգոստոսի դրությամբ կազմել է 83046 մարդ, ինչը 386 մարդով կամ 0.5%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 6309 մարդով կամ 7.1%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2019թ. օգոստոսի դրությամբ կազմել է 61966 մարդ, ինչը 5058 մարդով կամ 7.2%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 12422 մարդով կամ 16.6%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2019թ. հունվար-օգոստոսին կազմել է 4,844.3 մլն. դոլար, ինչը 94.0 մլն. դոլարով կամ 2.4%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1,075.3 մլն. դոլարով կամ 28.5%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-օգոստոս)

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)




ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)




Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ




Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինանսավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ




Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2019թ. հունվար-օգոստոսին կազմել է -1,523.9 մլն. դոլար, ինչը 51.3 մլն. դոլարով կամ 3.3%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 497.5 մլն. դոլարով կամ 48.5%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանաման ծավալը (ՖՕԲ գներով) 2019 թ.հուււնվար-օգոստոսին կազմել է 1,660.2 մլն դոլար, ինչը 72.7 մլն. դոլարով կամ 4.6%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 288.9 մլն. դոլարով կամ 21.1%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2019թ. հունվար-օգոստոսին կազմել է 3,184.1 մլն դոլար, ինչը 21.3 մլն. դոլարով կամ 0.7%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 786.4 մլն. դոլարով կամ 32.8%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2019 թ. հունվար-օգոստոսին կազմել է 178659 դրամ, ինչը 10192 դրամով կամ 6.0%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 11346 դրամով կամ 6.0%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2019թ. հունվար-օգոստոսին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 100,061.0 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -41,637.5 մլն. դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -58,423.5 մլն. դրամ: 2018թ. ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -13,931.5 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 48,457.0 և -34,525.5 մլն դրամ: 2017թ. ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -71,654.1 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է  համապատասխանաբար 92,198.6 և - 20,544.5 մլն. դրամ:

* Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները